



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

29 նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Էդուարդ Բադալյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
Էդուարդ Բադալյանը 2016թ. նոյեմբերի 9-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատա-
րան՝ խնդրելով.

«ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվա-
ծի 3-րդ մասը ճանաչել հակասահմանադրական և անվավեր»:

2. Ըստ դիմողի՝ խախտվել է ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով ամ-
րագրված իր իրավունքը, պետությունը միջամտել է այդ հիմնական իրավունքին և
իր միջամտության համար չունի սահմանադրաիրավական արդարացում:

Դիմողը գտնում է, որ անմեղության կանխավարկածի ուժով վարչական իրավախախտումների իրավունքում անձի մեղքի ապացուցման պարտականությունը դրված է վարչական մարմնի վրա, քանի որ անձը, ում վերագրվում է իրավախախտման կատարումը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան վարչական մարմինը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական միջոցները:

Դիմողի կարծիքով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը պիտանի միջոց չէ իրականում վարչական իրավախախտում կատարած անձին բացահայտելու, նրան վարչական պատասխանատվության ենթարկելու և դրանով իսկ՝ այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելու նպատակին հասնելու համար:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի հունիսի 21-ի ՍԴՈ-1282 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ վեճի առարկա իրավակարգավորումն իրավաչափ նպատակ է հետապնդում, հենվում է իրավահարաբերության սուբյեկտների փոխհամաձայնեցված և կանխատեսելի վարքագծի վրա, ուղղված է մարդկանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, երաշխավորում է սեփականության ոչ իրավաչափ օգտագործման դեպքում պատասխանատվության անխուսափելիությունը և բացառում է խտրականությունը նման պատասխանատվության հարցում՝

պայմանավորված փոխհամաձայնությամբ իրավահարաբերության մեջ մտած սուբյեկտների սոցիալական փոխառնչություններով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Էդուարդ Բադալյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

29 նոյեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-31